ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- Ն-3453

« 26 » ապրիլի 2022թ.

ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻՆ
ԷՄ ՍԻ ԷՍ ԿՈՎԿԱՍ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԻՆ
ԿՈՄՊԱՍՍ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ս. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

<u>ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ</u>

իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված N 1.2) լրացված չեն «4.8. Իրական շահառուի կոնտակտային տվյալները» ենթաբաժնի «4.8.1. Էլ. փոստի հասցեն» և «4.8.2. Հեռախոսահամարը» դաշտերը:

Միաժամանակ վերոնշյալ հայտարարագրի՝ «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ:

<u>Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ</u>

իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) Հավելված 1.2-ին վերաբերող տեղեկատվության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգը՝ «Էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերի փոխարեն նշված է «գնանշման հարցման հրավերի» բառերը:

<u>Կոմպասս ՍՊԸ</u>

իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- Հայտարարագրի «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին» դաշտում Հայտարարագրի ստորագրման ամիսը նշված է ոչ ամբողջական.
- հրավերին կից ներկայացված՝ հայտարարագրի լրացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի 3)-րդ ենթակետով սահմանված է, որ «Վերահսկողության մակարդակը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացվել են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձին վերաբերող տվյալները: Մասնակցի հայտով ներկայացված հայտարարագրի «2.3. Վերահսկողության մակարդակը» ենթաբաժնի «2.3.2. Մասնակցության տեսակը» դաշտում կատարված է նշում, այն դեպքում, երբ Հայտարարագրի 2.1. ենթաբաժինը լրացված չէ:

Միաժամանակ Հայտարարագրի՝ «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն

«ա.» կետում որևէ նշում կատարված չէ, ինչպես նաև Հայտարարագրի հավելվածի համարը նշված է «N 1.3», այն դեպքում, երբ հրավերով իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը սահմանված է N 1.2 հավելվածով:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **ապրիլի 27-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788